Ֆեդերատիվ ընտրությունների ձեռնարկ

Առողջապահական և անվտանգության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն ստանալու համար այցելեք elections.ca կայքէջը

1-800-463-6868 / elections.ca / TTY 1-800-361-8935

Elections Canada

EC 90332-ARM (02/2021)

Ձեր առողջությունը և անվտանգությունն առաջնակարգային են

Ձեր ընտրական տեղամասում աշխատակիցները դիմակով կլինեն:
Այնտեղ նույնպես կգտնվեն՝

Ձեռքի ախտահանիչ կայաններ

Ֆիզիկական հեռավորություն պահպանելու հստակ նշաններ

Ամեն աշխատասեղանի մոտ միայն մեկ աշխատակից պլեքսիգլաս պատնեշի հետևում

Ընտրությունների գնալիս հիշեք՝

Հագնել դիմակ



Կտրամադրենք միանգամյա օգտագործման մատիտ քվեաթերթիկում նշում կատարելու համար, համենայն դեպս դուք կարող եք բերել ձեր մատիտը կամ գրիչը



Պահպանեք երկու մետր հեռավորություն մյուս ընտրողներից և ընտրական տեղամասի աշխատակիցներից

Եթե ունեք Կովիդ 19 -ի ախտանշաններ, կամ էլ դրական է թեստը, կամ առնչվել եք վիրուսը կրող անձի հետ, ապա դիմեք elections.ca կայքին փոստով քվեարկելու համար:

Սույն գրքույկը հասանելի է տարբեր լեզուներով՝ **elections.ca** կայքէջում:
Այլ՝ օրինակ բրայլյան լեզվով, խոշոր տառատեսակ և դեյզի տարբերակով ձևաչափերի համար, խնդրում ենք զանգահարել մեզ: **1-800-463-6868** կամ **1-800-361-8935 (TTY)**.

Գրանցվեք՝ ընտրողի տեղեկատվական քարտ ստանալու



Եթե դուք գրանցված եք, ապա ընտրության օրվա նշանակումից հետո ընտրողի տեղեկատվական քարտը կստանաք փոստով: Այնտեղ նշվում է, թե որտեղ և երբ կարող եք քվեարկել: Քվեարկության գործընթացը դյուրացնելու համար, քվեարկության գնալիս վերցրեք ձեզ հետ վերոնշյալ քարտը և անձը հաստատող ընդունելի փաստաթուղթ:

Եթե քարտը չեք ստացել կամ տեղեկությունները նրանում սխալ են, ապա ձեզ կարող են չգրանցել կամ ձեր՝ ընտրողի մասին տեղեկատվությունը, կարող է ճշգրիտ չլինել: Այցելեք elections.ca կայքէջը կամ զանգահարեք մեզ **1-800-463-6868** կամ **1-800-361-8935 (TTY)**, որպեսզի ստուգեք և հայտնեք ձեր հասցեն: Դուք կարող եք գրանցվել կամ ճշտել ձեր հասցեն նաև քվեարկության օրը:

Դաշնային ընտրություններում գրանցվելու և քվեարկելու համար անհրաժեշտ է, որ լինեք

- Կանադայի քաղաքացի
- քվեարկության օրվա դրությամբ պետք է լրացած լինի ձեր 18 տարին
- ունենաք ձեր անձը և բնակության հասցեն հաստատող փաստաթուղթ

Քվեարկելու եղանակները

Ընտրությունների ժամանակահատվածում դուք կարող եք քվեարկել գրեթե ցանկացած ժամի:
Ընտրեք քվեարկության ձեզ հարմար լավագույն տարբերակը:

1 **Ընտրությունների անցկացման օրը**

Ձեր ընտրատեղամասը բաց կլինի 12 ժամ շարունակ (ժամերը տարբերվում են ըստ ժամային գոտիների)

Ստուգեք **ընտրողի տեղեկատվական քարտում** նշված ձեր քվեարկության ամսաթիվն ու վայրը:

2 **Նախնական քվեարկության օրերին**

Ձեր ընտրատեղամասը բաց կլինի ընտրության անցկացման օրվանից մեկ շաբաթ առաջ՝ ուրբաթ, շաբաթ, կիրակի և երկուշաբթի օրերին, առավոտյան 9-ից մինչև երեկոյան 9-ը:

3 **Քվեարկեք փոստով**

Դիմումը ներկայացրեք ըմտրությունների օրվանից առաջ երեքշաբթի օրը մինչև երեկոյան ժամը 6.00 Համոզված եղեք, որ մենք կստանանք փոստով ուղարկած քվեաթերթիկը **մինչև ընտրությունների օրը,** հակառակ դեպքում այն հաշվի չի առնվի: Այցելեք **elections.ca** կայքէջը վերջնաժամկետի վերաբերյալ ինֆորմացիա ստանալու, և որքանով է նպատակահարմար փոստսվ քվեարկելը ձեր դեպքում:

4 **Կանադայի տարածքում գտնվող Elections Canada ցանկացած գրասենյակում**

Այցելեք Elections Canada-ի գրասենյակ մինչև երեքշաբթի օրը՝ ընտրությունների նախօրեին, մինչև երեկոյան ժամը 6-ը և կկարողանաք օգտվել հատուկ քվեարկության գործընթացից: Ընտրությունների օրվա նշանակումից հետո այցելեք կամ զանգահարեք **elections.ca**՝ մեր մոտակա գրասենյակը գտնելու համար:

Փոստով քվեարկելու պահանջի դեպքում դուք հնարավորություն կունենաք **ՄԻՄԻԱՅՆ** փոստով քվեարկելու

Պատրաստ ունեցեք անձը ապացուցող փաստաթուղթ

Ձեր անձը և բնակության հասցեն ապացուցելու երեք տարբերակ ունեք:
Քվեարկելու համար պետք է լինեք Կանադայի քաղաքացի և առնվազն 18 տարեկան

Տարբերակ 1



Ներկայացրեք ձեր անձը հաստատող հետևյալ փաստաթղթերից մեկը՝

- վարորդական իրավունքի վկայական
- Կանադայի կառավարության (ֆեդերատիվ,նահանգային/տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմնի) կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթ՝ լուսանկարով, անուն ազգանունով և ներկայիս հասցեով

կամ

Տարբերակ 2

Ներկայացրեք անձը հաստատող երկու փաստաթուղթ

Երկու փաստաթղթում էլ պետք է նշված լինի ձեր անուն ազգանունը և, առնվազն, մեկում պետք է նշված լինի ձեր հասցեն:

+

Օրինակներ.

- ընտրողի տեղեկատվական քարտ և բանկային քաղվածք
- կոմունալ վճարների անդորրագիր և ուսանողական տոմս

Չունե՞ք վերոնշյալները: Խնդի՛ր չի:

Կան ընդունման ենթակա անձը հաստատող այլ փաստաթղթեր: Ամբողջական ցանկը տես **elections.ca**-ում

կամ

Տարբերակ 3

Եթե չունեք անձը հաստատող փաստաթուղթ

Դուք իրավունք ունեք մասնակցել քվեարկությանը, եթե գրավոր հայտարարություն անեք ձեր անձի և բնակության վայրի մասին, և նշեք որևէ անձի, որը ճանաչում է ձեզ և գրանցված է ձեր նույն ընտրատարածքում ու կարող է երաշխավորել ձեզ:

+

Երաշխավորողը պետք է կարողանա իր անձը և բնակության վայրը հաստատող փաստաթուղթ ներկայացնել: Որևէ անձ չի կարող երաշխավոր լինել մեկից ավելի անձանց համար (բացառությամբ՝ երկարատև խնամքի հաստատություններում):

Քվեարկելու ընթացքում օգնության միջոցներ

Ընտրությունների օրը կամ նախընտրական օրերին քվեարկելու համար բոլոր ընտրողները կցվում են որոշակի ընտրատեղամասի: Եթե ֆիզիկական սահմանափակումներ ունեք, ընտրության օրը հայտնի դառնալուց հետո համոզվեք, որ ձեր ընտրատեղամասը մատչելի է, Ինչպես պարզել մատչելիությունը՝

- ստուգեք ընտրողի ձեր քարտը,
- մուտքագրեք ձեր փոստային ինդեքսը Ընտրողի տեղեկատվական ծառայության Voter Information Service բազայի մեջ՝ **elections.ca** կայքում, կամ
- զանգահարեք **1-800-463-6868** կամ **1-800-361-8935 (TTY):**

Եթե մտահոգ եք ձեր ընտրատեղամասի մատչելիության վերաբերյալ, ապա զանգահարեք մեզ **1-800-463-6868** կամ **1-800-361-8935 (TTY)**:

Քվեարկության ժամանակ աջակցության հարցերով՝ թարգմանիչ և ժեստերի լեզու ներառյալ, զանգահարեք Elections Canada-ի մոտակա գրասենյակ մինչև ընտրության նախօրեի երեքշաբթի օրը՝ մինչ երեկոյան ժամը 6-ը:

Ընտրության օրը քվեարկության ժամանակ տրամադրվող օժանդակ միջոցներ ու ծառայություններ.

Մեծ չափերի քվեաթերթիկ՝ թեկնածուների անուններով, **խոշոր տառատեսակով**

Թարգմանություն (լեզու և ժեստերի լեզու): Այս և այլ աջակցությունը հնարավոր կլինի միմիայն **նախապես ներկայացված պահանջի դեպքում:**

Թեկնածուների **անունները խոշոր տպագիր և բրայլյան լեզվով**

Օժանդակություն՝ քվեաթերթիկում ձեր նշումը կատարելիս
(Եկեք որևէ ծանոթ անձի հետ, կամ դիմեք ընտրատեղամասի աշխատակցին)

Շոշափման և բրայլյան լեզվով քվեաթերթիկի նմուշ

Հաստ գրիչ-մատիտ
(սահմանափակ քանակ)
Կարող եք բերել ձեր մատիտը, գրիչը



Խոշորացույց (4x)

Ստորագրելու ձեռնարկ

Նշումներ՝ Բրայլյան լեզվով քվեաթերթիկները կլինեն միայն ընտրությունների օրը: Խոշոր տառատեսակով քվեաթերթիկները կլինեն ինչպես նախնական այնպես էլ ընտրությունների օրը: